

ԱՀ Ասկերանի շրջանի որոշ համայնքների բյուջեների վերլուծությունը

*Բարսեղյան Լյուդմիլա
Հարությունյան Սուսաննա
Հարությունյան Իրենա
Չուրխանյան Նելլի*

Հանգուցային բառեր. *համայնքային բյուջե, սեփական եկամուտներ, դոտացիա, ծախսեր, կատարողական, տոկոս*

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է շրջափակման, համավարակի, պատերազմի ժամանակ և ռուսական խաղապահների ներկայությամբ տնտեսությունը զարգացնող, հողը մշակող, կրթություն ստացող և խաղաղության ձգտող Ասկերանի շրջանի համայնքների ֆինանսական պլանների վերլուծության և կատարողականի գնահատման վրա՝ հաշվի առնելով գործընթացի բոլոր շահագրգիռ կողմերի հետաքրքրվածությունը:

Թեմայի **նպատակն է** ներկայացնել նախապատերազմական և հետպատերազմյան շրջաններում Ասկերանի մի քանի համայնքների բյուջեների կատարողականները՝ անշուշտ, նշելով պետական բյուջեից համապատասխան հատկացումները:

Նպատակին հասնելու համար առաջադրվում ենք հետևյալ **դրույթները.**

1. Ներկայացնել բյուջեի եկամուտները և ծախսերը՝ նշելով պլանային և փաստացի տվյալները, կատարողականները:
2. Յուրաքանչյուր համայնքային բյուջեի եկամուտների ավելացման առաջին երաշխիքն անվտանգության ապահովումն է և կանխատեսումները ապագայի նկատմամբ:
3. Հետպատերազմյան ԱՀ-ում առևտրային բանկերը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողներին վարկեր չեն տրամադրում, որը լուրջ ֆինանսական կացության մեջ է դնում բիզնես կազմակերպողին: Հետևաբար, միայն պետական բյուջեի հաշվին համայնքների զարգացման և բարգավաճման հարցը իրատեսական չէ:

ԱՀ Ասկերանի շրջանը բացառիկ կարևոր նշանակություն ունեցող շրջաններից մեկն է, որի տարածքը մինչև 2020 թ. պատերազմը կազմում էր հանրապետության ընդհանուր տարածքի 10.4 %-ը: Շրջանը ընդգրկում էր 42 համայնք: Բնակչության մեծամասնությունը զբաղվում էր հացահա-

տիկի և բանջարաբուստանային կուլտուրաների մշակմամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ:

2020 թվականին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմից հետո ԱՀ որոշ շրջաններ, համայնքներ անցան թշնամու տիրապետության տակ: Ասկերանի շրջանի Ակնաղբյուր, Ավետարանոց, Արմենակավան, Մադաթաշեն, Մոխշմիատ, Ջրաղացներ, Սղնախ և Ուղտասար գյուղերը բռնազավթեցին Ադրբեջանի կողմից, իսկ Քարագլուխ և Ուրախաչ գյուղերը ռազմական գործողություններից հետո բնակեցված չեն: Փաստորեն մի շարք համայնքներ դարձան սահմանամերձ. որն էլ խոչընդոտում է ոչ միայն լիարժեք գործունեությանը, այլ նաև լուրջ վտանգներ է սպառնում մարդկանց կյանքին:

Հասարակության պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ է ծավալել գործունեություն տարբեր բնագավառներում՝ գյուղատնտեսություն, արդյունաբերություն, առևտուր, կապ, տրանսպորտ: Համայնքների զարգացումը լուրջ ուշադրության է արժանանում պետության կողմից: Մի շարք ծրագրեր են կյանքի կոչվել ու դեռևս իրականացման փուլում են, որոնք կնպաստեն տնտեսության զարգացմանը, բնակչության զբաղվածությանը, եկամտի ավելացմանը և կարող են կանխել բնակչության արտահոսքը: Յուրաքանչյուր համայնք ունի իր բյուջեն, որի եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման կարգը սահմանվում է համապատասխան օրենսդրությամբ: Պետությունն իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ է հատկացնում համայնքների համաչափ զարգացումն ապահովելու համար:

Ուսումնասիրենք և վերլուծենք Ասկերանի շրջանի առանձին համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի կատարողականները 2019-2021 թթ.:

Ասկերան քաղաքի 2019 թ. բյուջեի եկամուտները պլանավորվել էր 30663.0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 28649.2 հազ. դրամ կամ կատարողականը կազմել է 93.4%: Ընդ որում, սեփական եկամուտները պլանավորվել էր 23845.0 հազ. դրամ, որը փաստորեն կատարվել էր 22719.3 հազ. դրամով կամ 95.3 %-ով: Դոտացիան նշված ժամանակահատվածում պլանավորված էր 6818.0 հազ. դրամ, որը փաստորեն կատարվել է 5929.9 հազ. դրամով կամ կազմել է 87%: Ասկերան համայնքի բյուջեի ծախսերը պլանավորվել էր 2019 թ. 30663.0 հազ. դրամ, փաստացին կազմել էր 24481.2 հազ. դրամ կամ կատարողականը 79.8 % էր [2]:

Ասկերանի 2020 թ. բյուջեի եկամուտները նախատեսված էր 64492.0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 51067.3 հազ. դրամ կամ կա-

տարվել էր 79.2 %, թերակատարումը պայմանավորված էր համավարակով և պատերազմական իրավիճակով: Սեփական եկամուտները նշված ժամանակահատվածում պլանավորվել էր 25540. 0 հազ դրամ, սակայն փաստացին կազմել է 67. 3%: Դոտացիան պլանավորված էր 38952.0 հազ. դրամ, բայց փաստացի պետական բյուջեից հատկացվել էր 33872.5 հազ. դրամ, կամ այն կազմել է 87 % [2]:

2020 թվականի Ասկերանի համայնքային բյուջեի ծախսային մասը պլանավորված էր 70745.2 հազ. դրամ, փաստացի այն կազմել է 56574.8 հազ դրամ, կամ կատարողականը կազմել է 80 %:

2021 թ. Ասկերանի բյուջեի մուտքերը պլանավորվել էր 70445.2 հազ. դրամ, փաստացի եկամուտները կազմել են 62195.3 հազ. դրամ կամ կատարվել է 88.3 %՝ սեփական եկամուտները նախատեսված էր 23540.0 հազ. դրամ, փաստացի կատարողականը կազմել է 22053.9 հազ. դրամ կամ 93.7%: Դոտացիան նախատեսված էր 46905.2 հազ. դրամ, փաստորեն ֆինանսավորվել էր 40141.4 հազ. դրամ կամ կազմել է 85.6 %: Բյուջեի ծախսերը նշված ժամանակահատվածում նախատեսվել էր 71345.2 հազ. դրամ, փաստացի արձանագրվել է 58147.8 հազ. դրամ կամ կատարվել է 81.5 %-ով:

Ասկերանի շրջանի խոշոր համայնքներից է Նորագյուղը: 2019 թ. համայնքային բյուջեի եկամուտները պլանավորվել էր 15560.8 հազ. դրամ. փաստացի մուտքագրվել է 15146.7 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 97.3 %, ընդ որում սեփական եկամուտները նախատեսված էր 11779.4 հազ. դրամ, փաստացին կազմել է 11794.6 հազ. դրամ՝ ապահովելով 100.1 % աճ: Պետական բյուջեից նախատեսված դոտացիան 3781.4 հազ. դրամ էր, փաստացի տրամադրվել է 3352.1 հազ. դրամ, որը կազմել է 88.6 % [4]:

Համայնքի բյուջեի ծախսերը նշված ժամանակաընթացքում նախատեսված էր 18560.8 հազ. դրամ, փաստացին կազմել էր 17702.5 հազ. դրամ, որը կազմում էր 95.4 %:

2020 թ. Նորագյուղի համայնքային բյուջեի եկամուտները նախատեսված էր 14818.7 հազ. դրամ, փաստացին կազմել էր 10071.1 հազ. դրամ կամ կատարվել էր 68 %, սեփական եկամուտները պլանավորված 8483.0 հազ. դրամի փոխարեն կազմել է 3736.1 հազ. դրամով, կամ կատարողականը կազմել էր 44 %: Դոտացիան նախատեսված 6335.7 հազ. դրամ, որը լրիվ ֆինանսավորվել է, կատարողականը կազմել է 100 %:

2020 թ. Նորագյուղի բյուջեի ծախսերը պլանավորված էր 13024.1 հազ. դրամ, որից փաստացին կազմել էր 10668.8 հազ. դրամ կամ կատար-

վել է 81.9 % [2]:

2021 թ. համայնքային բյուջեի եկամուտները նախատեսված էր 15224.1 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 14745.9 հազ. դրամ կամ կատարվել էր 96.9 %, սեփական եկամուտները՝ 10483.0 հազ. դրամի փոխարեն արձանագրվել է 10657.9 հազ. դրամ կամ կատարողականը կազմել է 101.7 % [2]:

Դոտացիան նշված ժամանակահատվածում 4741.1 հազ. դրամի փոխարեն տրամադրվել է 4088.0 հազ. դրամ կամ 86.2 %: 2021 թվականին բյուջեի ծախսերի նախատեսված 15024.1 հազ. դրամի փոխարեն կազմել է 14047.7 հազ. դրամ կամ 91.5 %:

Ի տարբերություն մնացած համայնքների՝ Նորագյուղի վերոնշյալ տվյալները գոհացուցիչ են:

Ակնադրյուր գյուղը պատերազմից հետո մնաց թշնամու տիրապետության տակ: 2019 թ. համայնքային բյուջեի եկամուտները նախատեսված 10335.9 հազ. դրամի փոխարեն փաստացի կատարվել էր 9845.2 հազ. դրամով կամ կազմել էր 95.3 %, ընդ որում սեփական եկամուտները 4043.7 հազ. դրամի փոխարեն կազմել էր 4572.0 հազ. Դրամ, կատարողականը՝ 110.3 %: Դոտացիան պլանավորված 6192.2 հազ. դրամի փոխարեն ֆինանսավորվել է 5273.2 հազ. դրամով կամ 85.2 %: Ծախսերը նշված ժամանակահատվածում պլանավորված 10335.9 հազ. դրամի փոխարեն կազմել են 9334.9 հազ. դրամ կամ 90.3 % [2]:

2020 թ. Ակնադրյուրի համայնքային բյուջեի մուտքերը նախատեսվել էր 10719.9 հազ. դրամ, սակայն փաստացին կազմել էր 8337.0 հազ. դրամ կամ 77.8 %: Սեփական եկամուտները պլանային 4013.8 հազ. դրամի փոխարեն 2179.7 հազ. դրամ էր կամ 54.3 %:

Պետության կողմից սահմանված դոտացիան 6706.1 հազ. դրամի փոխարեն ֆինանսավորվել է 6157.3 հազ. դրամ կամ կատարվել էր 91.8 %: Նշված ժամանակահատվածում բյուջեի ծախսերը պլանավորված 11681.3 հազ. դրամի դիմաց կազմել է 8848.4 հազ. դրամ կամ 75.7 % [2]:

2021 թ. Ակնադրյուրի համայնքային բյուջեի եկամուտները նախատեսված էր 8606.0 հազ. դրամ, փաստացին կատարվել է 7839.9 հազ. դրամ կամ 91.1 %: Քանի որ գյուղը հետպատերազմյան շրջանում լրիվությամբ անցավ Ադրբեջանի վերահսկողության տակ, հետևաբար, չկան նաև սեփական եկամուտներ, սակայն դոտացիան պլանավորված 8606.1 հազ. դրամի փոխարեն ֆինանսավորվել է 7839.9 հազ. դրամ կամ կատարվել է 91.1 %: Ծախսերը նախատեսված 8606.0 հազ. դրամի փոխարեն կազմել է 7839.9 հազ. դրամ կամ 91.1 %:

Այգեստանի բյուջեի եկամուտները 2019 թ. նախատեսված էր 9435.4 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 9409.9 հազ. դրամ կամ 99.7 %, որից սեփական եկամուտները պլանավորված 6019.5 հազ. դրամի փոխարեն կազմել է 6502.5 հազ. դրամ կամ 107.7 %: Դոտացիան նախատեսված 3395.9 հազ. դրամի փոխարեն ֆինանսավորվել է 2907.4 հազ. դրամ կամ 85.6 %: Բյուջեի ծախսերը 2019 թ. պլանավորված 9435.4 հազ. դրամի փոխարեն կատարվել է 8226.6 հազ. դրամով կամ 87.2 %-ով [2]:

Համայնքային բյուջեի մուտքերը 2020 թ. պլանավորված էր 11676.6 հազ. դրամ, փաստացին կազմել է 8034.7 հազ. դրամ կամ 68.8 %: Նշված մուտքերից սեփական եկամուտները պլանավորված 6139.6 հազ. դրամի փոխարեն կատարվել են 4834.2 հազ. դրամով կամ 78.7 %: Դոտացիան պլանավորված 5337.0 հազ. դրամի փոխարեն ֆինանսավորվել է 3200.5 հազ. դրամ կամ կատարվել է 58.8 %:

2020 թ. համայնքային բյուջեի ծախսերը 11676.6 հազ. դրամի փոխարեն՝ 5372.1 հազ. դրամ էր կամ կազմել է 46 %: 2021թ. Այգեստանի համայնքային բյուջեի մուտքերը պլանավորվել էր 11676.6 հազ. դրամ. փաստացին կազմել է 10250.0 հազ. դրամ կամ կատարվել է 87.8 %, որից սեփական եկամուտները նախատեսված էր 6139.6 հազ. դրամ, փաստացին՝ 6340.3 հազ. դրամ՝ կատարողականը կազմելով 103.3 %: Դոտացիան նախատեսված 5537.0 հազ. դրամի փոխարեն ֆինանսավորվել է 3909.9 հազ. դրամ կամ 70.6 %: Բյուջեի ծախսերը նախատեսված 11976.6 հազ. դրամի փոխարեն կատարվել են 5346.6 հազ. դրամով կամ 44.6 %-ով:

Խնայատ համայնքի բյուջեի մուտքերը 2019 թ. սահմանված էր 9822.7 հազ. դրամ, որը փաստացի կազմել է 9696.6 հազ. դրամ., կատարողականը՝ 98.7 %: Սեփական եկամուտները պլանային 4730.6 հազ. դրամի փոխարեն կատարվել է 5262.2 հազ. դրամով կամ 111.2 %-ով: Դոտացիան նախատեսված 5092.1 հազ. դրամի փոխարեն ֆինանսավորվել է 4434.4 հազ. դրամով կամ 87.1 %-ով: Խնայատի համայնքային բյուջեի ծախսերը նախատեսված 10572.7 հազ. դրամի փոխարեն կազմել է 10148.6 հազ. դրամ կամ 96 %: 2020 թ. համայնքային բյուջեի մուտքերը նախատեսված էին 11250.0 հազ. դրամ, փաստացին կազմել էր 8337.4 հազ. դրամ կամ 74.1 %, սեփական եկամուտները պլանի 5395.8 հազ. դրամի փոխարեն կազմել է 2830.5 հազ. դրամ, կատարողականը՝ 52.5 %, դոտացիան՝ 5854.2 հազ. դրամի դիմաց ֆինանսավորվել է 5506.9 հազ. դրամ կամ կատարվել է 94.1 %-ով: Նշված ժամանակաընթացքում համայնքի բյուջեի ծախսերը պլանավորված 10853.6 հազ. դրամի փոխարեն կատարվել է 8681.0 հազ. դրամով կամ 80 %-ով: 2021 թ. համայնքի բյուջեի մուտքերը պլանավոր-

ված 10853.6 հազ. դրամի փոխարեն կազմել է 8024.7 հազ. դրամ կամ 91.8 %, որից սեփական եկամուտները՝ 2880.3 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 2886.9 հազ. դրամ կամ 100.2%: Դոտացիան նախատեսված 5864.8 հազ. դրամի փոխարեն տրամադրվել է 5137.8 հազ. դրամ կամ 87.6 %: Նույն ժամանահատվածում կատարողականը կազմել է 8023.3 հազ. դրամ կամ 91.7 % [2]:

Հաջորդ ուսումնասիրվող համայնքը Իվանյան համայնքն է: 2019 թ. համայնքային բյուջեի մուտքերը պլանավորված 9852.9 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 9576.8 հազ. դրամ կամ 97.2 %, որից սեփական եկամուտները նախատեսված 7723.5 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 7767.0 հազ. դրամ կամ 100.6 %: Պետական բյուջեից տրվող դոտացիան պլանավորված 2129.4 հազ. դրամի դիմաց ֆինանսավորվել է 1809.8 հազ. դրամ կամ 85%: Բյուջեի ծախսերը 2019 թ. պլանավորված 11362.9 հազ. դրամի փոխարեն կատարվել է 9808.0 հազ. դրամով կամ 86.3 %-ով: Իվանյանի համայնքային բյուջեի մուտքերը 2020 թ. նախատեսված 11509.7 հազ. դրամի փոխարեն կազմել է 8411.0 հազ. դրամ կամ 73 %, որից սեփական եկամուտները պլանավորված 9821.9 հազ. դրամի փոխարեն փաստացի կազմել է 6463.8 հազ. դրամ կամ 69.2 %: Դոտացիան նախատեսված 2187.8 հազ. դրամի փոխարեն ֆինանսավորվել է 1936.3 հազ. դրամով կամ կազմել է 88.5%: Բյուջեի ծախսերը նշված ժամանակաշրջանում ծրագրավորված 12480.0 հազ. դրամի փոխարեն կազմել է 9869.1 հազ. դրամ կամ 79.1 % [2]:

2021 թ. Իվանյան համայնքի բյուջեի մուտքերը պլանավորված 13459.2 հազ. դրամի դիմաց կազմել են 11045.3 հազ. դրամ կամ 82.1%, որից սեփական եկամուտները 9321.9 հազ. դրամի փոխարեն հավաքագրվել է 9360.6 հազ. դրամ կամ 100.4 %: Դոտացիան 4137.3 հազ. դրամի փոխարեն ֆինանսավորվել է 1684.7 հազ. դրամով կամ կազմել է 40.7 %: Ծախսերը նախատեսված 11508.8 հազ. դրամի փոխարեն կազմել են 5481.3 հազ. դրամ կամ 47.6 %:

Եզրակացություն

Ուսումնասիրելով ԱՀ Ասկերան քաղաքի և որոշ համայնքների բյուջեների եկամուտները և ծախսերը 2019, 2020, 2021 թ.թ., առանձնացնելով սեփական եկամուտները և պետական բյուջեից տրվող դոտացիաները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ ուսումնասիրված համայնքների բյուջեները, առանց դոտացիոն հատկացումների, սեփական եկամուտներով չեն կարող ապահովել հիմնական ծախսերը: Անշուշտ շատ համայնքներ, տարիների ընթացքում աստիճանաբար ավելացնելով սեփական եկամուտները և տարբեր աղբյուրներից ստանալով նյութական և ֆինանսական միջոցներ, կարող էին որոշակի հաջողությունների հասնել, եթե չլիներ 2020 թ. պատերազմը: Պատերազմը խոր հետք թողեց ամբողջ Արցախի վրա:

Անշուշտ իրավիճակը կարգավորելու կարևոր պայմաններից մեկն անվտանգության ապահովումն է. եթե լինի կայուն, խաղաղ իրավիճակ, արցախցին երբեք չի լքի դարերով ստեղծած և արյունով շաղախված իր փոքրիկ հողակտորը:

Գրականություն

1. ԱՀ կառավարության պաշտոնական կայք. <http://gov.nkr.am/hy/>
2. ԱՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք. <https://minfin-nkr.am/>
3. ԱՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն պաշտոնական կայք. <https://www.mtai.am/>
4. ԱՀ Վիճ. ծառայության պաշտոնական կայք. <http://www.stat-nkr.am/>
5. ԱՀ ՊԵԿ պաշտոնական կայք. <https://www.tax.nk.am/>
6. <https://anau.am/>

Анализ бюджетов некоторых общин Аскеранского района Республики Арцах

Барсегян Людмила

Арутюнян Сусанна

Арутюнян Ирена

Долуханян Нелли

Резюме

Ключевые слова: *общинный бюджет, собственные доходы, субсидии, расходы, исполнение, процент*

Аскеранский район Республики Арцах является одним из регионов исключительной важности. В состав района входят 42 общины, количество населенных пунктов – 45. Большинство населения занимается растениеводством и животноводством. После войны, развязанной Азербайджаном в 2020 году, ряд сел Аскеранского района - Акнахбюр, Аветараноц, Арменакаван, Мадаташен, Мохшмхат, Джрагацнер, Сгнак и Ухтасар остались оккупированы противником, а села Караглух и Урахач необитаемы после военных действий. Развитие общины заслуживает серьезного внимания со стороны государства. Реализован и реализуется ряд программ, которые будут способствовать развитию экономики, занятости населения, увеличению доходов и предотвратят отток населения из республики. У каждой общины есть свой бюджет, который определяется правительством с указанием источников доходов и порядка осуществления расходов. Меры противодействия выделяются громадам из государственного бюджета (фонд) для обеспечения доходов. Были исследованы доходы бюджетов нескольких общин, выделив собственные доходы и выделяемые субсидии, а также указав расходы. Одним из представленных общин является село Акнахбюр, которое в настоящее время находится под контролем Азербайджана. Однако большая часть перемещенного населения, найдя пристанище в Арцахе и различных районах Республики Армении, вовлечена в определенную сферу трудовой деятельности и не собирается покидать Арцах. В работу включены анализ доходов муниципальных бюджетов Аскерана, Норагюха, Акнахпюра, Айгестана, Хнапата и Иваняна (собственные доходы - субсидии и расходы за 2019-2021 годы).

Доходы бюджета города Аскерана на 2019 год планировались в размере 30663,0 тыс. драмов, фактические поступления составили 28649,2 тыс драмов, а исполнение составило 93,4%. При этом собственные доходы планировались в размере 23845,0. тыс. драмов, что было фактически

выполнено на 22719,3 тыс. драмов или 95,3%. В указанный период субсидия составляет 5929,9 тыс. драмов или 87%. Бюджетные расходы общины Аскеран в 2019 году составили 24481,2 тыс. драмов или 79,8%. Доходы бюджета Аскерана на 2020 год составили 51 067,3 тыс драмов, но фактическое исполнение составило 80%. Доходы бюджета 2021 года планировались осуществить как в 2020 году – произведено 81,5 % затрат. Аналогичное исследование и анализ были проведены в нескольких общинах, упомянутых выше. В заключительном разделе, обобщая доходы, собственные поступления, дотацию и расходы общин Аскеранского района за 2019-2021 гг., мы приходим к выводу, что ни одна община в настоящее время не имеет возможности покрывать свои расходы без государственной поддержки, субсидий, на уровне собственных доходов. Война оказала негативное влияние на весь Арцах. Но на этом вопрос существования арцахского населения не закончился. Здесь продолжают творить, созидать и защищать родную землю.

Budget Analysis of some Communities in Askeran Region of the Republic of Artsakh

*Barseghyan Lyudmila
Harutyunyan Susanna
Harutyunyan Irena
Dolukhanyan Nelli*

Summary

***Key words:** community budget, own income, subsidies, expenses, performance, percentage*

Askeran region of the Republic of Artsakh is one of the regions of exceptional importance. The district includes 42 communities, the number of settlements - 45. The majority of the population is engaged in crop production and animal husbandry. After the war unleashed by Azerbaijan in 2020, a number of villages in the Askeran region - Aknakhbyur, Avetaranots, Armenakavan, Madatashen, Mohshmhat, Jragatsner, Sgnak and Ukhtasar remained occupied by the enemy, and the villages of Karaglukh and Urakhach were uninhabited after hostilities. The development of the community deserves serious attention from the state. A number of programs have been implemented and are being implemented in order to contribute to the development of the economy, employment of the population, increase in income and prevent the outflow of the population from the republic. Each community has its own

budget, which is determined by the government, indicating the sources of income and the procedure in which expenditures are made. Countermeasures are allocated to communities from the state budget (fund) to ensure income. The revenues of the budgets of several communities were studied, highlighting their own income and subsidies, as well as indicating the expenditure. One of the communities represented is the village of Aknakhbyur, which is currently under the control of Azerbaijan. However, the majority of the displaced population, having found shelter in Artsakh and various regions of the Republic of Armenia, now is involved in some sphere of labor activity in Artsakh and is not going to leave it. The work includes an analysis of the income of the municipal budgets of Askeran, Noragyugh, Aknakhpyur, Aygestan, Khnapat and Ivanyan (own income – subsidies and expenses for 2019-2021).

The budget revenues of Askeran for 2019 were planned in the amount of 30663.0 thousand drams, the actual revenues amounted to 28649.2 thousand drams, which was done to 93.4%. At the same time, own incomes were planned in the amount of 23845.0 thousand drams, which was actually performed for 22719.3 thousand drams or 95.3%. During this period, the subsidy is 5929.9 thousand drams or 87%, actual expenses are 24481.2 thousand drams or 79.8%. In 2020 Askeran's budget was almost doubled, but the actual execution was 80%. Budget income for 2021 was planned as much as in 2020 - 81.5% of the expenses were made. A similar study and analysis has been carried out in several communities mentioned above. There is the same situation in almost each one of them. In the final section, summarizing the incomes, own income, subsidies and expenses of the communities of the Askeran region for 2019-2021, we come to the conclusion that no single community currently has the opportunity to cover its expenses without state support. The war had a negative impact on the whole Artsakh. Thus the existence matter of the Artsakh population did not end there: they continue living, creating and protecting their land.

Ներկայացվել է 16.07.2022 թ.

Գրախոսվել է 12.09.2022 թ.

Ընդունվել է սպագրությամբ 25.11.2022 թ.